ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 սեպտեմբերի 2026թ. թիվ 666-Ա

ՀԵՐՄԻՆԵ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետի, ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ և 6)-րդ կետերով, հաշվի առնելով Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Ռ.Պողոսյանի 03.09.2026թ. զեկուցագիրը, «Մարգահովիտի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Հերմինե Մաթևոսյանի 2026 թվականի օգոստոսի 25-ի և ՀՀ Լոռու մարզպետի 01.09.2026թ. թիվ 01/104.1/07469-2026 գրությանն ի պատասխան ներկայացված՝ 2026 թվականի սեպտեմբերի 2-ի գրավոր բացատրությունները՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Երևան քաղաքի Բրյուսովի 28-1 հասցեի բնակիչ Սոֆյա Մարգարյանի դիմումում բարձրացված հարցերի ուսումնասիրության նպատակով 2026 թվականի օգոստոսի 25-ին մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Ռ.Պողոսյանի՝ «Մարգահովիտի առողջության կենտրոն» ՊՈԱԿ կատարած այցելության օրը, 2026 թվականի օգոստոսի 14-ին և 17-ին առանց գործատուին տեղեկացնելու և անհարգելի պատճառներով ուշ աշխատանքի ներկայանալու, ինչպես նաև աշխատանքային ներքին կարգապահական կանոնները կոպտորեն խախտելու համար «Մարգահովիտի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Հերմինե Մաթևոսյանի նկատմամբ կիրառել «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

2. «Մարգահովիտի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Հերմինե Մաթևոսյանին՝

Հետագայում բացառել նմանատիպ խախտումները:

3. Մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ էլեկտրոնային փոստի միջոցով, ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով կամ պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-09-04 09:45:02 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 4
ք.Վանաձոր